ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/57

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Պահապան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Վ. Պապյանի (լիազորագիր՝ տրված 03.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2884-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/895-2021 գրության հիման վրա 01.03.2021թ. թիվ 26/26-1/2884-2021 գրությամբ նախաձեռնել է «Պահապան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Պահապան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ՆԳ-2021/57 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը՝ գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ Պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ–ի միջև 17.05.2018թ. կնքվել N ԲՄԱՊՁԲ–7/25-1 գնման պայմանագիրը: Պայմանագրի 2018 և 2019թթ. համաձայնագրերով նախատեսված պայմանագրային պարտավորությունները «Պահապան» ՍՊԸ-ն ըստ ժամանակացույցի պատշաճ կերպով և ժամկետներում կատարել է: 31.03.2020թ. կնքվել է հիշյալ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 3 Համաձայնագիրը: Ըստ Համաձայնագրի գնման ժամանակացույցի, «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում արտադրելու և ՀՀ ՊՆ-ին մատակարարելու 630 հատ «Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ», 630 հատ «Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ», 300 հատ «Վերնաշապիկ՝ երկարաթև սպիտակ գույնի ՌՈ» և 300 հատ «Վերնաշապիկ՝ կարճաթև սպիտակ գույնի ՌՈ» ապրանքատեսակները:

Համաձայնագրի գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում արտադրվել և ՀՀ ՊՆ-ին է մատակարարվել 215 հատ «Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ» և 245 հատ «Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ» ապրանքատեսակները: Իսկ 415 հատ «Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ», 385 հատ «Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ» և 300-ական հատ «Վերնաշապիկ՝ երկարաթև սպիտակ գույնի ՌՈ» և «Վերնաշապիկ՝ կարճաթև սպիտակ գույնի ՌՈ» ապրանքատեսակները չեն մատակարարվել, որի պատճառով ՊՆ ՆՏԱԴ-ի կողմից Համաձայնագիրը 21.01.2021թ. միակողմանի մասնակի լուծվել է:

Համաձայնագրի միակողմանի լուծման հիմքերը ՊՆ ՆՏԱԴ-ը ուղարկել է ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ «Պահապան» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար: ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 11.02.2021թ. N ՍՑ-ՆԳ-2021/31 որոշմամբ ընթացակարգը մերժվել է, Որպես ընթացակարգի մերժման հիմք Բողոքներ քննող անձը ընդունել է այն

հանգամանքը, որ ոչ օրենսդրությամբ, ոչ էլ հիշյալ պայմանագրով Համաձայնագրի միակողմանի մասնակի լուծում նախատեսված չէ: Հիշյալ որոշման հիման վրա ՊՆ ՆՏԱԴ-ը 22.02.2021թ. N ՆՏԱ/615 գրությամբ հայտնել է, որ միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագիրը:

Հիշյալ համաձայնագիրը ՊՆ-ի կողմից միակողմանի մասնակի լուծելը անվավեր ճանաչելու խնդրանքով «Պահապան» ՍՊԸ-ն համապատասխան հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի 1-ին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (քաղաքացիական գործ ԵԴ/8122/02/21):

Սույն ընթացակարգը ևս ենթակա է մերժման հետևյալ հիմանավորումներով՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նշված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավարությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման է սահմանել պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի

չէ, եթե օրենքով և պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը: (Տես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի 14.04.2009թ. N ԵՔԴ/0595/04/08, 27.11.2015թ. N ԵԷԴ/0888/02/14 քաղ. գործերով որոշումները):

«Պահապան» ՍՊԸ-ի և ՊՆ ՆՏԱԴ-ի միջև 17.05.2018 թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/25-1 պայմանագրի 7-րդ կետը սահմանում է՝ «Պայմանգրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել.....»:

Համաձայնագրով նախատեսված 415 հատ «Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ», 385 հատ «Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ» և 300-ական հատ «Վերնաշապիկ՝ երկարաթև սպիտակ գույնի ՌՈ» և «Վերնաշապիկ՝ կարճաթև սպիտակ գույնի ՌՈ» ապրանքատեսակները չմատակարարելու հարցում բացակայում է «Պահապան» ՍՊԸ-ի մեղքը, քանի որ համաձայնագիրը կնքվել է 31.03.2020թ. այսինքն այն ժամանակ, երբ ՀՀ-ում և ամբողջ աշխարհում լայնորեն տարածվել էր կորոնավիրուսի համաճարակը, իսկ սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը ընկած ամբողջ ընթացքում՝ նաև պատերազմական իրավիճակը, որոնք հանդիսանում են անհաղթահարելի ուժ (ֆորս-մաժոր):

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմբերի 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն որոշմամբ 2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2021 թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին:

2020թ. մարտ ամսից մինչև օրս «Պահապան» ՍՊԸ-ն Կառավարության հիշյալ որոշումների հիման վրա աշխատել է տևական ընդհատումներով, բազմաթիվ աշխատողներ վարակվել են կորոնավիրուսով, որի պատճառով ՍՊԸ-ն այդ ամբողջ ընթացքում գործել է 20-25% հզորությամբ: Եղել են դեպքեր, որ որևէ արտադրամասի 1

աշխատողի վարակման պատճառով չի աշխատել ամբողջ արտադրամաս, քանի որ որպես կոնտակտավորներ արտադրամասի բոլոր աշխատողները ինքնամեկուսացվել են: Իսկ ձևարանի աշխատողների ինքնամեկուսացման պատճառով տևական ժամանակով պարալիզացվել է ողջ ֆաբրիկայի գործունեությունը:

ՀՀ Պարետի 27.03.2020թ. «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 19 որոշման հիման վրա մինչև 2020թ. մայիսի 14-ը «Պահապան» ՍՊԸ-ն ամբողջովին դադարեցրել է արտադրական գործունեությունը, որի պատճառով առաջացել են տասնյակ պայմանագրերի կատարման խաթարումներ, որի մասին ՊՆ ՆՏԱԴ-ը բազմիցս բանավոր իրազեկվել է:

Կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք «Պահապա» ՍՊԸ-ի կողմից գնվում և ներկրվում են առավելապես արտասահմանից (Ռուսաստան Բելոռուս, Թուրքիա և այլն:) Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները, որը առավել խստացվեց Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ողջ ընթացքում և հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Դեկտեմբեր ամսվա սկզբներին է միայն «Պահապան» ՍՊԸ-ին հաջողվել մեծ դժվարություններով Հայաստան ներկրել հիշյալ համաձայնագրով նախատեսված ապրանքատեսակի արտադրության համար անհրաժեշտ բոլոր նյութերը և աքսեսուարները (աստառ, շղթաներ, սինտիպոն, անջրաթափանց կտոր, ռետինե մանժետներ, կաշվե գրպանիկներ և այլն:) Դրանց ստացման վերաբերյալ փաստաթղթերը կցվում են: Փաստաթուղթ չունեցող ապրանքատեսակները գնվել են ներքին շուկայից:

2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը, կապված Ադրբեջանի կողմից ՀՀ-ի և ԱՀ-ի նկատմամբ սանձազերծած պատերազմի հետ, «Պահապան» ՍՊԸ-ի-ն ամբողջովին դադարեցրել է պայմանագրային պարտավորությունների կատարումը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի 06.10.2020թ. N ՆՏԱ/4804 գրության հիման վրա ամբողջովին կատարելով միայն ՊՆ-ի պատվերները, արտադրելով և բանակին մատակարարելով միմիայն «Կոստյում բամբակյա կեպիով և/ կամ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակները, ինչպես նաև արտադրել և բանակին է մատակարարել քնապարկեր, թիկնոցներ, ներքնակներ և անհրաժեշտ այլ պարագաներ, ընդ որում դրանց մի մասը բարեգործական հիմունքներով:

Բացի նշված պայմանագիրը, «Պահապան» ՍՊԸ-ն կնքված տասնյակ այլ պայմանագրեր

ունի ինչպես ՊՆ ՆՏԱԴ-ի, այնպես էլ այլ գերատեսչությունների հետ: Վերը հիշատակված ֆորս-մաժորային իրավիճակի պատճառով այդ պայմանգրերի լրիվ կամ մասնակի կատարումը ևս խոչընդոտել է վիճահարույց պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը:

18.12.2020թ. N Մ-009 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ն ՊՆ ՆՏԱԴ-ի ղեկավարին ներկայացրել է ստեղծված իրավիճակը, հայտնել, որ ստացվել են անհրաժեշտ բոլոր գործվածքները և աքսեսուարները, սակայն ժամանակի առումով հնարավոր չէ մինչև տարեվերջ արտադրել և մատակարարել թերմատակարարված վերնաշապիկները, ուստի խնդրվել է կամ նշված ապրանքատեսակների արտադրումը և մատակարարումը փոխանցել հաջորդ տարվան, որի համար պատրաստակամ ենք ներկայացնելու համապատասխան բանկային երաշխիքներ, կամ երկկողմանի մասնակի լուծելու պայմանագրի՝ հիշյալ չմատակարարված ապրանքատեսակների վերաբերյալ մասը: Հիշյալ գրությանը որևէ գրավոր կամ բանավոր արձագանք չի տրվել, իսկ 21.01.2021թ. ՊՆ ՆՏԱԴ-ը միակողմանի մասնակի լուծել է համաձայնագիրը: Եթե ՊՆ ՆՏԱԴ-ը դրական արձագանքեր մեր 18.12.2020թ. հիշյալ գրությանը, ապա «Պահապան» ՍՊԸ-ն հաստատապես ի վիճակի կլիներ մինչև 2021թ. հունվարի 15-ը ամբողջովին մատակարարելու թերմատակարարված վերնաշապիկների ամբողջ խմբաքանակը:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով «Պահապան» ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը, խնդրում ենք «Պահապան» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը ևս մերժել»:

«Պահապան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/57 ընթացակարգի շրջանակներում 05.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/895-2021

գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է 17.05.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 3 համաձայնագիրը /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարիի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/25-1 պայմանագիրը՝ հիմք ընդունելով N ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.02.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Կից ներկայացվում են վերը նշված մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/57 ընթացակարգի շրջանակներում 05.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/57 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/57 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/25-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում:

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 31.03.2020թ. կնքվել է Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին համաձայնագիր N 3-ը (հետայսու նաև՝ Համաձայնագիր):

4. Համաձայնագրի N 1 հավելվածի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի 2020 թվականի՝ 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում:

5. «Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 22.02.2021թ. թիվ ՆՏԱ-615 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված թիվ ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 3 համաձայնագրի շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր՝

- 630 հատ վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 415 հատ,
- 630 հատ վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 385 հատ,
- 300 հատ վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել,
- 300 վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել,

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայանագիրը վերը նշված ծառայությունների մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 11.02.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/25-1 պայմանագիրը վերը նշված ծառայությունների մասով՝ հիմք ընդունելով ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակատեի պահանջները»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 22.02.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2884-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/895-2021 գրությունը և կից փաստաթղթերը, սույն գործի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից նյութերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ

անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի,*** **այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով

պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերը նշված իրավակարգավորումները ցույց են տալիս, որ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Ընդ որում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում, արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Այլ կերպ ասած՝ պարտավորությունը չկատարած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողը ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության չկատարումը և (կամ) անպատշաճ կատարումը պայմանավորված է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում, արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Եվ այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/25-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 31.03.2020թ. կնքվել է Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին համաձայնագիր N 3-ը:

Համաձայնագրի N 1 հավելվածի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի 2020 թվականի՝ 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 22.02.2021թ. թիվ ՆՏԱ-615 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված թիվ ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 3 համաձայնագրի շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր՝

- 630 հատ վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 415 հատ,
- 630 հատ վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 385 հատ,
- 300 հատ վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել,
- 300 վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել,

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայանագիրը վերը նշված ծառայությունների մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 11.02.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/25-1 պայմանագիրը վերը նշված ծառայությունների մասով՝ հիմք ընդունելով ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակատեի պահանջները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 22.02.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/57 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք «Պահապան» ՍՊԸ-ի կողմից գնվում և ներկրվում էին այլ երկրներից: Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները, որը առավել խստացվել է Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ողջ ընթացքում և հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Դեկտեմբեր ամսվա սկզբներին է միայն «Պահապան» ՍՊԸ-ին հաջողվել մեծ դժվարություններով Հայաստան ներկրել հիշյալ համաձայնագրով նախատեսված ապրանքատեսակի արտադրության համար անհրաժեշտ բոլոր նյութերը և աքսեսուարները:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/57 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է

տրամադրել 07.12.2020թ. տրիկոտաժե բամբակյա գործվածք ներկված և 12.12.2020թ. կարի բամբակյա թել արտադրության համար ապրանքների ներմուծման հայտարարագրերը և բուժհաստատությունների կողմից տրված տեղեկատվությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ համաձայն «ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված թիվ ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի՝ Ընկերությունը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր

- 630 հատ վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 415 հատ,
- 630 հատ վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 385 հատ,
- 300 հատ վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել,
- 300 վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 2.1.7 ենթակետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,

պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը և դրանք համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, ինչպես նաև Ընկերության կողմից Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունները՝ գտնում եմ, որ Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***քանի որ Ընկերությունը ՀՀ-ում ստեղծված իրավիճակում, այն է՝ Covid-19 համավարակի արդյունքում ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների, ինչպես նաև ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու հետևանքով, օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծելը պատշաճ կատարելու հնարավորությունից***:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2884-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**